ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1951 *Общественные науки*

Լ. Բարայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքի պատմությունը՝ մեր պատմագրության մեջ քիչ ուսումնասիրված հարցերից է։

Այդ ժամանակաշրջանի հեղինակներին առաջին հերթին հետաքրքրել է կատարվող դեպքերի արտաքին երևույթները և ոչ այդ դեպքերին ծնունդ տվող սերքին պատճառները։

Այդ հեղինակները, որոնք գերազանցապես հոգևորականներ և իշխող վերնախավի ներկայացուցիչներ էին, իրենց աշխատություններում՝ ժամանակաշրջանը վերարտադրող ու արտացոլող հարցերը կապել են եկեղեցու և իշխող դասակարգի պատմության, օտար նվաճողների վարած քաղաքականության հետ։

Եթե հայկական աղբյուրներն ընդհանրապես սակավախոս են սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող հարցերում, միակողմանի, ապա այդ հանգամանքը շատ ավելի ցայտուն կերպով նկատելի է օտար աղբյուրներում, որոնց հեղինակները, ելնելով իրենց քաղաքական նկատառումներից ու շահերից, նվաճված երկրների իշխող դասակարգի ներկայացուցիչներին՝ ֆեոդալ-կալվածատերերին դիտել են որպես մոնղոլական պետության ներկայացուցիչների և չեն խոսել նրանց ներքին կյանքի, նրանց ֆեոդալական իրավունքների, հայրենի հողատիրության և այլ հարցերի մասին։

Մեր կարծիքով մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի և հայ ժողովրդի, ինչպես և բոլոր նվաճված ժողովուրդների կյանքը ճիշտ պատկերելու, այդ տիրապետության իրական պատկերը տալու համար անհրաժեշտ է բազմակողմանի ու խոր ուսումնասիրության ենթարկել աղբյուրներում պահպանված ամեն մի մանրամասնություն, ամեն մի դիտողություն, որոնց գիտական վերլուծությունը կօգնի տվյալ էպոխայի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պարզաբանմանը։

Առաջնորդվելով այդ սկզբունքով, մենք ներկա հոդվածում փորձել ենք վերլուծման ենթարկել Մաղաքիա Արեղայի «Պատմութիւն վասն ազգին Նետողաց» աշխատության մեջ հիշատակված երկու բառ-տերմին, որոնց ճիշտ մեկնաբանումը կարող է օգնել մոնղոլական պետության հարկային քաղաքականության և արտոնյալ հողատիրության ինստիտուտի առանձին հարցերի լուսաբանմանը։ Այդ բառերն են «տղղուն» և «սղամիշ»։ Սրանցից առաջինը՝ «տղղունն», մեր կարծիքով համապատասխանում է մոնղոլական կենտրոնական իշխանության կողմից նվաճված երկրները ուղարկված էլչիների ծախսերի համար՝ գանձված հարկին։

Նախ համառոտակի ծանոթանանք, թե այդ ինչ հարկ էր։

Մոնղոլական կենտրոնական իշխանության կողմից նվաճված երկրները զանազան հանձնարարություններով ուղարկված պաշտոնյաները, սուրհան-

գակները, սանդան պաշտոնատար անձինք ընդհանուր անունով կոչվում էին էլչիներ։ Այդ էլչիներին տրվում էր հատուկ փայլեզներ (արտոնագիր), որով նրանք իրավունք էին ստանում իրենց ամբողջ ճանապարհորդության ընթացքում նվաճված երկրների բնակչությունից պահանջել իրենց շքախումբը ապահովել ուտելիքով, գիշերելու բոլոր հարմարություններով, փոխադրական միջոցներով և ընդհանրապես այն ամենով, ինչ որ էլչիները կառաջադրեին։

Ժամանակակիցներից մեկը այս մասին հետևյալն է գրում.

«Սովորություն էր դարձել մեծաքանակ սուրհանդակներ ուղարկել արքունիքից և դեպի արքունիք, դրանք գյուղերից հափշտակում էին այն ամենը, ինչ որ իրենց տերերը հավանել էին»[1]։

Ռուի Գոնցալեց Կլավիխոն, որ Հայաստանով անցել է 1403—1406 թվերին, գրում է.

«Երբ մենք գալիս էինք որևէ գյուղ, գյուղապետը գալիս էր և կանգնում մեր առջևը, և դրա վրա, Թիմուրի պատվիրակը, որ ինչպես ասացինք, մեզ հետ էր, հրամայում էր նրան մեր պետքին համար կերակուր բերել, ավելին ևս, գյուղապետը պարտավոր էր հեծնելու համար ձի և մեզ սպասարկելու համար ծառայողներ հայթայթել։ Եվ եթե այդ հրամանները արագորեն չգործադրեր հաճեցնելու համար այդ թաթար պատվիրակին, այն ժամանակ գավազանի և մտրակի հարվածներ էր տալիս, մի բան, որ զարմացնում էր մեզ։ Այսպես մեր անցած բոլոր գյուղերի մարդիկ, և հիրավի նրանք այդ Չաղաթայը՝ տեսնելուն պես ամենքը փորձում էին թաքնվել նրանցից»[3]

Նա շարունակում է.

«... Մյուս օրը... մենք հասանք Արզինջան (Երզնկա) քաղաքը ...Այդ երեկո քաղաքի կառավարիչը մեր ուտեստի համար ուղարկեց եփած կերակուրի շատ պնակներ, առատ պտուղ, գինի և հաց... երկուշաբթի առավոտը կառավարչի հրամանով կանխիկ դրամով մի որոշ գումար տվին մեզ, և մեզ ասացին, թե մենք ամեն օր պիտի ընդունենք նույնքան մի գումար, որքան ժամանակ մենք մնանք քաղաքում, մեր ծախսերի համար»[4]

Կլավիխոյի վկայությունները վերաբերում են Լենկ Թեմուրի շրջանին, սակայն որքան մենք գիտենք, Թեմուրը շարունակեց մոնղոլների վարչատնտեսական քաղաքականությունը, հետևապես մեզ իրավունք ենք վերապահում նրա շրջանին վերաբերող բոլոր տվյալները օգտագործել, հիմնավորելու համար մեր կողմից առաջադրված մոնղոլական շրջանին վերաբերող որևէ խնդիր։

Կիրակոս Դանձակեցին գրում է.

«... Եւ ապա սկսան հարկապահանջութեամբ և երքևեկութեամբ եւ զինուորութեամբ նեղել զնոսա... Եւ իբրեւ անցին ամք ինչ, նեղացաւ ի նոցանէ իշխանն Աւագ, զի կարի ժլատք էին, և ոչ կարէր զամենեսին ընդ միտս

---

[1] П. Сайкс, История Персии, т. II, стр. 172. Лондон, 1930 (перевод с английского).

[2] Կլավիխոն չաղաթայ ասելով հասկանում էր մոնղոլ կամ թաթար, որ պատկանում էր Լենկ Թեմուրի ընտանիքին կամ կառավարական պաշտոնյա էր։

[3] Ուղեգրություններ, հ. 1-ին, էջ 85—86։

[4] Նույն տեղում, էջ 86։

նոցա հաճել, զի ոչ միայն բաւականային ուտելով և ըմպելով, այլ եւ պահանջէին երիվարս եւ հանդերձս մեծագինս... և զայս ոչ միայն մեծամեծքն առնէին, այլ եւ փոքունք...»[1]

Վերոհիշյալ վկայությունները և պատմագրության մեջ պահպանված բազմաթիվ այլ փաստեր խոսում են այն մասին, որ նվաճողների երթևեկող պաշտոնեության նկատմամբ նվաճված ժողովուրդների պարտավորությունները կազմում էին հարկման առանձին ինստիտուտ—իրավարանորեն և օրենքի ուժով օրինականացված։ Հարկման այս ինստիտուտի հետևանքներն այնքան ծանր էր անդրադառնում բնակչության վրա, որ շուտով ամայանում են ինչպես բոլոր նվաճված երկրները, այնպես և Հայաստանը, հատկապես այդ երկրների մերձճանապարհային բնակավայրերը, որտեղի բնակչությունը փախչում էր ճանապարհային ծանր պարտավորություններից, երթևեկող պաշտոնեության մատակարարումից և սպասարկումից։ Եղել են բազմաթիվ դեպքեր, երբ հայ գյուղացիները, լսելով մոնղոլ պաշտոնյայի՝ էլչու գալու մասին, դատարկել են իրենց ամբողջ գյուղը և հեռացել։ Նրանք հաճախ ճանապարհների վրա պահակներ են նշանակել, որպեսզի վերջիններս իմացնեն էլչիների գալու մասին։

Մոնղոլական պաշտոնեության քմահաճ և սանձարձակ գործունեությունը, որը շատ դեպքերում կամայական կողոպուտի և ավարի բնույթ էր կրում, շուտով սկսեց վտանգավոր հեռանկարներ ցույց տալ հենց մոնղոլական խաներին։

«Նվաճելով երկիրը,—ասում է Մարքսը,—նվաճողների համար մերձավորագույն խնդիրը հանդիսացել է նաև մարդկանց յուրացումը»։[2] Մոնղոլական կենտրոնական իշխանությունն էլ հանձին իր հեռատես խաների, տեսնում և զգում էր չարաբաստիկ «երթևեկությունների» դառն ու ավերիչ հետևանքները—նվաճված երկրների ամայացումը, աշխատավոր ժողովրդի աեղաշարժը և մասսայական փախուստը, որոնք, իհարկե, շահախնդիր նվաճողներին զրկում էին հենց «յուրացում և մարդիկ» ամենամերձավոր ու կենսական նպատակների իրագործումից։ Ահա, ելնելով միայն իրենց իսկ շահերից, մոնղոլական խաները ստիպված են լինում ձեռնարկելու այնպիսի միջոցառումներ, որոնց նպատակն էր սանձահարել «երթևեկող» այդ պաշտոնեության քմահաճույքները, նրանց ագահությունը։

Մաղաքիա Արեղան գրում է.

«Իսկ Զորմանն բարի (մոնղոլական զորավարներից մեկը—Լ. Բ.) խորհրդով ասէր ի հրամանէ և նախախնամութենէ աստուծոյ բաւական լինել զաւերումն աշխարհին ասելով՝ թէ չէն մնան, ասէ զերկիր վաստակին, և զկէսն մեզ տան զապրանացն, զայգոյ և զարտոյ, և կիսովն իւրեանք ապրին...»։[3]

Մանգու-խանի ձեռնարկած միջոցառումների մասին Ռաշիդ-Ադ-դինը հետևյալն է գրում.

«Մանգու-խանը հրամայեց նաև, որպեսզի էլչիները առանց գործի ոչ մի քաղաք և գյուղ չմտնեն և բնակչությունից չվերցնեն խար (անաս-

1 Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1910, էջ 230։
2 К. Маркс, Капитал, т. III, гл. 47, стр. 696.
3 Մաղաքիա Արեղա, «Պատմութիւն վասն ազգին Նեստորացւոց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 9։

նակեր), մթերապաշար, իրենց հասանելիքից ավելի. քանի որ բոնությունն ու ճնշումները չափն անցրել էին, ընդ որում հողագործները արտակարգ բազմաթիվ ու բազմատեսակ ճնշումներից, բոնագանձումներից ու ծանրություններից դրված էին այնպիսի ծանր անտանելի վիճակի մեջ, որ նրանցից ստացվածը չէր կազմում որպես պարհակ բոնագանձվածի կեսն անգամ։

Հուլավու-խանի այս ասպարեզում ձեռնարկած միջոցառումների մասին Մաղաքիա Աբեղան հետևյալն է գրում.

«...Յամէն շէն գեղէ մեկանաւոր հանէին, և ի փոքրէն՝ մեկ, ի մեծէն՝ երկու կմ գ. և անուանեաց զնս իմս, և առաքէր զնս ամէն աւեր տեղիսն առնել շինութի, և ամենևին հարկ ոչ տալ, բայց միայն հաց և թան ճանապարհորդ տաթարինց։[1]

Հետագայում, Ղազան-խանի 1303 թվին այս ասպարեզում ձեռնարկած միջոցառումները խոսում են այն մասին, որ նախորդ խաների կողմից այդ ուղղությամբ կատարված բարենորոգումներն ու միջոցառումները կրել են լոկ ժամանակավոր բնույթ, որ անգամ կենտրոնական իշխանությունը ի վիճակի չէր վերջ տալ կամ թերևս սահմանափակել պաշտոնեության քմահաճ կողոպուտն ու թալանը, որն այնքան խորն արմատավորված սիստեմ էր դարձել այդ շրջանում։ Նրա հետևանքները կործանարար ազդեցություն էին ունենում հենց մոնղոլական պետության գոյության համար, սպառնում նրա տնտեսական հզորությանն ու հետագա կայունությանը։

Վերը բերված փաստերը ցույց են տալիս, որ նվաճված ժողովուրդների, մասնավորապես աշխատավոր ժողովրդի համար մոնղոլական պետությանը տրվող բազմաթիվ ու բազմատեսակ հարկերի ու պարտավորությունների շարքում, եթե ոչ ամենածանրը, թերևս ամենածանր պարտիքներից մեկը եղել է մոնղոլական պաշտոնեության՝ էլչիների մատակարարման ու սպասարկման պարտիքը։

Անհրաժեշտ է այժմ պարզել, թե մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանից հայկական աղբյուրներում պահպանված հարկային տերմիններից որին պետք է վերագրել այն պարտավորությունը—պարտիքը, որը տալիս էր հայ ժողովուրդը մոնղոլական երթևեկող պաշտոնեությանը՝ էլչիներին, այլ խոսքով՝ հարկային որ տերմինն է արտահայտում հարկման—պարտիքի այդ հասկացողությունը։

Մոնղոլական շրջանից հայ պատմագրության մեջ պահպանվել են մեկ տասնյակից ավելի բառեր, որոնք ժամանակակիցների կողմից գործ են ածվել հարկային մի շարք տերմինների շարքում, առանց նրանց կոնկրետ իմաստավորումը տալու։

Այդպիսի բառերից է Մաղաքիա Աբեղայի «Պատմութիւն վասն ազգին Նետոդաց» աշխատության մեջ հարկային մի շարք տերմինների հետ հիշատակված (երկու տեղ) «տղղու» բառը։

1. «Զի աստուծոյ կամք է առնուլ զերկիր և պահել ի շինութեան և դնել ասախ, կալ ընդ հրամանաւ մեր և տալ մեզ տղղու, եւ մալ, և թաչար, և զիչուրդ։»[2]

---

[1] Մաղաքիա Աբեղա, «Պատմութիւն վասն ազգին Նետոդաց», Պետերբուրգ, 1870, էջ 32—33։

[2] Նույն տեղում, էջ 10։

2. «...Եւ նա (Գերերին վանքի վանահայր Ստեփաննոսը—Լ. Բ.) յորժամ ետես զգլխաւոր Տաթարին՝ որ գնայր առ նա ի վանքն, էառ գինի ամանով ինչ եւ գնաց ընդդէմ Տաթարին և բռնեաց տղղու, որպէս սովորութիւն է Տաթարին, եւ ապա յետ այնորիկ տարեալ ի վանքն, և նստուցեալ հանդերձ այլ հեցելօքն, որ կային զկնի գլխաւորին և զենեաց ոչխար, և երաց այլ գինի, եւ յագեցոյց ուտելով եւ ըմպելով զամէնն...»։[1]

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հ. Աճառյանը իր Արմատական բառարանում (հատոր 7-րդ, էջ 929) հետևյալ բացատրությունն է տալիս «տղղուն» բառի մասին. «տղղուն—մի տեսակ թաթարական հարկ, թաթարական turgu կամ turqu ուտելիք և խմելիք, պաշարեղեն»։ Ք. Պատկանովն իր Մաղաքիա Արեղայի աշխատության ռուսերեն թարգմանության ծանոթության մեջ, հիմնվելով Կատրմերի „Histoire des Mongols“ աշխատության մեջ տրված այդ բառի բացատրության վրա, որտեղ հեղինակը «տղղուն» համարում է աղճատումն «զզղու» բառի, կամ նմանեցնում, ձուլում «տրզու» բառի, գրում է՝ «այն դեպքում, երբ մեծ մասամբ պատահում է «տրզու»=turgu—տուրզու ձևով, այդ բառը նշանակում է պարեն, ուտեստեղեն, մեր հեղինակի (Մաղաքիայի—Լ. Բ.) մոտ էլ այն գործ է ածված նույնպես հայտնի հարկի նշանակությամբ»։[2]

Հայկական ՍՍՌ Մատենադարանում Մաղաքիա Արեղայի պատմության երկու ձեռագիր է պահպանված, որոնցից № 3076, էջ 225ա գրված է «տղղուն» և № 1485, էջ «32բ» «տղղոյ»։

Հավանական պետք է համարել այն կարծիքը, որ «տղղուն» աղճատումն է մոնղոլական «տարղու» կամ տուրղու—տարղու—բառի, նշանակում է պարեն, ուտեստեղեն կամ ուտելիք, խմելիք և պարունակում է հարկային իմաստ։

Ելնելով վերը շարադրվածից, կարծում ենք, որ Մաղաքիա Արեղայի մոտ հիշատակված «տղղուն» բառը ճիշտ ձևով «տրղուն» կամ «տարղուն» պետք է դասել մոնղոլական ժամանակաշրջանի հայկական աղբյուրներում պահպանված հարկային տերմինների շարքը և ենթադրել, որ հարկային այդ տերմինը արտահայտել է հարկման—պարտիքի այն իմաստը, որը մեզ հետաքրքրում է, այլ խոսքով՝ նվաճված ժողովուրդների մոնղոլական պաշտոնեությանը—էլչիների մատակարարման և սպասարկման պարտավորությունը, որն իրականում կազմակերպված կողոպուտի ու թալանի բնույթ էր ստացել։

* * *

Մոնղոլների մոտ, նրանց տիրապետության տակ գտնվող երկրներում հողատիրության արտոնյալ տարածված ձևերից մեկը՝ դա սուրգյալ ինստիտուտն էր։ «Սուրգյալ» տերմինը մոնղոլական ծագումն ունի և նշանակում է բարյացակամություն, պարգևում, շնորհում, ցմահ օգտագործում և այլն։

1 Մաղաքիա Արեղա, «Պատմութիւն վասն ազգին Նեստորաց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 24։

2 Ք. Պատկանովը հավանական է համարում նաև Abul phar-ի այն կարծիքը, թե «տղղուն» կարող է համապատասխան լինել մոնղոլական targu բառին։

Մատենագրության մեջ պահպանված փաստերն ասում են, որ այդ արտոնությունը տրվել է Չինգիզ-խանի և նրա հաջորդների կողմից։ Հայ մատենագրության մեջ, ինչպես ենթադրում են, այդ տերմինը պահպանված է միայն Մաղաքիայի մոտ, այն էլ երկու տեղ միայն՝ «սղամիշ» ձևով։[1]

Հողատիրության արտոնյալ այս ինստիտուտը հետագայում, հետմոնղոլական շրջանում, արևելյան գրեթե բոլոր երկրներում դարձավ ֆեոդալական ավատային տիրապետության հիմնական ձև։

Սոուրգյալ արտոնյալ հողատիրությունը տրվում էր ազնվականության ներկայացուցիչներին ավատային տիրության հիմունքներով։ Սոուրգյալ հողատիրոջն իրավունք էր վերապահվում շահագործելու իրեն տրված հողի վրա բնակվող մարդկանց։ Հարկ եղած դեպքում արտոնյալ այդ հողատերը պարտավոր էր իր զինախմբով ներկայանալ իր տիրոջը, որից ստացել էր այդ պարգևը։ Ֆեոդալական կախման այդ ձևը առերևույթ նման է իկտային արտոնյալ ձևին։ Սակայն արտոնյալ այդ երկու ինստիտուտների որոշ նմանությունը, կարծում ենք, ուշ շրջանում ձևական է դառնում, հիմնականում նրանք ստանում են երկու տարբեր բովանդակություն—առաջին՝ ի տարբերություն իկտայի, սոուրգյալը անհամեմատ ավելի մեծ տերիտորիաների հասկացողություն է ընդգրկում և երկրորդ՝ սոուրգյալ տերմինի տակ հասկացվում է ոչ միայն հողագործական նստակյաց գավառների տիրապետություն, այլև քոչվորական-տափաստանային։ Սոուրգյալ ավատին տիրողն իր ձեռքում կենտրոնացնում է ինչպես նստակյաց, այնպես և քոչվոր բնակչության նկատմամբ ունեցած իշխանությունը։ Պետք է ասել, որ այդ կատեգորիայի մարդիկ ծագումով գրեթե բոլորն էլ քոչվոր ազնվականներ էին։ Նրանց համար որպես զինվորական ուժ հանդիսանում էր քոչվոր բնակչությունը, որի վրա էլ հենվում էին իրենք։ Պրոֆ. Յակուբովսկին «Ոսկե Հորդա» աշխատության մեջ խոսելով այդ մասին, գրում է.

«Գիսաքոչվոր այն ֆեոդալների դրությունը, որոնք մեծ քանակությամբ հողեր ունեին նստակյաց շրջաններում, և անասունների մեծաքանակ հոտեր՝ տափաստաններում, ամենից լավ արտահայտվում է այդ սոուրգյալ սիստեմում (ավատային տիրություն), որը մոնղոլական էպոխայում հանդիսանում էր ֆեոդալական խոշոր հողատիրության գերիշխող ձևը։ Սոուրգյալի բնորոշ գիծն այն է, որ այդ հողը համարվում էր ժառանգական տիրություն (և կարող էր վաճառվել ու գնվել ամբողջությամբ կամ մաս-

[1] Պրոֆ. Հ. Աճառյանն իր «Հայերեն արմ. բառ.»-ի 7-րդ հատորում (էջ 291) գրում է. «Սղամիշ—իշխանական պարգևատրություն—թաթարական—siurgamis «հաճություն», «պարգև»։ Պատկանովն իր Մաղաքիայի «պատմության» ռուսերեն թարգմանության ծանոթագրության մեջ դրա վերաբերյալ հետևյալ բացատրությունն է տալիս։ «Բարյացակամություն, պարգևատրում ավատային տեղամասով, պատվավոր հաղուստ «սոուրգալ»-առարկա, որով արտահայտում է բարյացակամություն։ Բաժնեկալված—ավատային տեղամաս, հողարաժին, թաղավորի կողմից նվեր տված, որն անցնում էր ժառանգաբար։ Վերջին իմաստով այդ բառը գործ է ածված և մեր հեղինակի մոտ», էջ 80—81։ Սղամիշ բառը ստուգել ենք Հայկական ՍՍՌ Մատենադարանում պահպանված Մաղաքիայի պատմության երկու ձեռագրերում, ձեռագիր № 3076, էջ 228բ և ձեռագիր № 1483, էջ «Բ4բ»։ Նույնն է, այսինքն բոլոր տեղերում էլ սղամշի ձևով։

մաս)։ Մոնղոլների ժամանակ խանական իշխանության կողմից տրվում էին գյուղացիներով բնակեցված հսկայական տարածություններ, ընդ որում մի չարք դեպքերում ընծայման յուրտիկներն ուղեկցվում էին թարխանային յուրտիկներով, այսինքն հրովարտակներով, որոնք ազատում էին տվյալ սուրգյալի բնակչությունը պետության օգտին տրվող բոլոր կամ մեծ մասամբ պարհակներից. այդպիսով անմիջական արտադրողի հավելյալ արդյունքի մեծ մասը թողնելով սուրգյալի՝ ֆեոդալ տիրապետողի օգտին։[1]

Վերոհիշյալ բացատրությունից հետո պրոֆ. Յակուբովսկին անցնում է կոնկրետ փաստերին և իր եզրակացությունները հիմնավորելու համար այդ փաստերը վերցնում է Հայաստանի իրականությունից։

Ուրում ենք նրա աշխատության այդ հատվածն ամբողջությամբ.

«Պատմելով հայկական թագավոր Հեթումի եղբոր՝ սպարապետ Սմբատի մասին, և Կույուկ-խանի (որն այստեղ կոչվում է Սային-խան), կողմից նրա նկատմամբ ցույց տրված վերաբերմունքի մասին, Մաղաքիան գրում է. «Նա շնորհեց նրան հողով և (սուրգյալ—Ա. Յա.) ավատային սեփականությամբ, տվեց մեծ յուրտիկ, ոսկե փայիզաներ և հանձնեց նրան հռչակավոր թաթարուհուն, որը կրում էր պոխտախ (գլխի զարդ)»։

Այնուհետև շարունակում է.

«Նույն բանը պատմում է Ստեփանոս Օրբելյանը. «Դրանից հետո նրան (Սմբատին) տվեցին ոսկե փայիզա, այսինքն, տախտակ՝ աստծու և թագավորի անուններով փորագրված։ Այդ նրանց մոտ հարգանքի բարձր նշանն էր, նրա համար յուրտիկ գրեցին, այսինքն՝ հրամանագիր, այն, որ կոչվում էր սիգել և նվիրեցին նրան այն բոլորը, ինչ որ Ասլանը վերցրել էր սրով։ Օրոտն իրեն պատկանող գավառներով բաչու նոյանի ազնվատոհմ իշխանների բաժնեկալվածքում—և Ուրոտն ամբոցն իր շրջակայքով, որպես հատուցումն իր հոր Լիպարիտի արյան, որը սպանվել էր այդ նույն տեղում։ Բացի այդ, Սմբատի անունը հանվեց բոլոր դավթարներից»։[2]

Նախ՝ պրոֆ. Յակուբովսկին շփոթել է պատմական երկու անձնավորությունների։ Այստեղ Կիլիկիայի Սմբատ սպարապետը՝ Հեթում թագավորի եղբայրը, Կոստանդինի տղան, շփոթված է Սյունիքի Սմբատ Օրբելյանի, Լիպարիտ Օրբելյանի տղայի հետ։ Բերենք հիշյալ մատենագիրների վկայությունները։ Մաղաքիան, նկարագրելով Բաչուի արշավանքները դեպի հարավ-արևմտյան Հայաստան և նրա հաջողությունները, Հեթումի հեռատես քաղաքականությունը, Բաչուի և Հեթումի միջև կնքված դաշինքը, Սմբատ սպարապետի 1243 թվի ուղևորությունը Կույուկ-խանի մոտ, այնտեղ նրա ստացած արտոնությունները, գրում է.

«Եւ արարեալ զնա սղամիշ, եւ տուեալ մեծ իաուլախ եւ փայիզայս ոսկիս, եւ Տաթար խաթուն պոխտախաւոր...»։[3]

Այնուհետև շարունակում է.

---

[1] Греков, Якубовский, Золотая Орда, Ленинград, 1937, стр. 99.

[2] Նույն տեղում, էջ 103։

[3] Մաղաքիա Արեղա, «Պատմութիւն վասն ազգին Նետոզաց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 17։

«... Զոր տեսեալ բարէպաշտ թագաւորն Հեթում զպարոն եղբայրն իւր՝ զՍմբատ այնպիսի պատուով պատուեալ եւ մեծարեալ ի դանէն, յոյժ ուրախացաւ. յուրախութիւն մեծ, ևս առաւել ընդ գրեալսն վասն ազատութեան երկրիս եւ վանորէիցս եւ ամենայն քրիստոնէից...»[1]

Ինչ վերաբերում է Սմբատ սպարապետի ստացած արտոնության բացատրությանը—«Եւ արարեալ զնա սղամիշ, եւ տուեալ մեծ իշխանս եւ փայլեալս ոսկիս...», ապա կարծում ենք, որ այս հարցում նույնպես պրոֆ. Յակուբովսկին որոշակի փաստարկումներ չունի Սմբատի ստացած արտոնությունը նույնացնելու մոնղոլական սոուրգյալ հողատիրության արտոնության հետ։

Պրոֆ. Յակուբովսկին, ինչպես և պրոֆ. Պետրուշևսկին[2] ելնելով Կատրմերի թերևս ճիշտ բացատրությունից «սղամիշ» բառի մասին, առանց խորը ուսումնասիրելու Մաղաքիա Արեղայի բերած փաստերը, անվերապահորեն «սղամիշ» բառի տակ հասկանում են մոնղոլական «սոուրգյալ» արտոնյալ հողատիրության ինստիտուտը։

Մեզ թվում է, որ եթե վերոհիշյալ գիտնականները խորը ուսումնասիրեին տվյալ հարցը, թերևս հանգեին այլ եզրակացության։

Սմբատ սպարապետը ներկայացել է Կույուկ-խանին 1243 թվին բանակցություններ վարելու նպատակով, այդ շրջանում Կիլիկիան անկախ թագավորություն էր, խոսք չի կարող լինել մոնղոլների կողմից նվաճված լինելու մասին, ինչպես և հասկանալի է մոնղոլական պետությանը հարկատու լինելու մասին։ Նշված աղբյուրում ոչ մի հիշատակություն կամ ակնարկ չկա Սմբատի ստացած հողի կամ հողային արտոնության մասին։ Դեպքերին ժամանակակից Հեթում պատմիչը, խոսելով Մանգու-խանի՝ Հեթում թագավորին տրված պատասխանի մասին, ասում է, որ Մանգու-խանը գրում է. «Նույնպես կամիմք զի ամենայն եկեղեցիք քրիստոնէից՝ եկեղեցականք եւ աշխարհականք վայելեսցեն ի շնորհս ազատութեան, եւ ոչ ոք իշխեսցէ նեղել զհայս»։[3]

Այստեղ նույնպես հողային արտոնությունների կամ թե հարկերից ազատվելու մասին ոչինչ չի հիշատակվում։

Մինչդեռ աղբյուրներում հիշատակված են մի շարք դեպքեր, որտեղ ուղղակի նշվում է նույն այդ խաների կողմից որոշ մարդկանց հարկերից ազատելու կամ հողային արտոնություններ տալու մասին, ինչպես Սմբատ Օրբելյանին շնորհված արտոնությունը և այլն։

Սակայն եթե նույնիսկ ընդունենք այն կարծիքը, որ իսկապես «սղամիշը» նույն սոուրգյալն է, հարց է ծագում, չէ՞ որ սոուրգյալը տրվում էր ցմահ օգտագործման և անձեռնմխելի էր. մի հանգամանք, որը Հեթում թագավորը պետք է իմանար։ Ինչու, ապա նա, տեսնելով Արևելյան Հայաստանում Արղունի կատարած աշխարհագրի ավերիչ հետևանքները, շտապում է անմիջապես գնալ Մանգու-խանի մոտ.

---

[1] Մաղաքիա Արեղա, «Պատմութիւն վասն ազգին Նեստորացոց», Ս. Պետերբուրգ 1870, էջ 17։

[2] Известия Академии наук СССР, Отделение общественных наук, 1937, № 4, статья Петрушевского „Хамдуллах Казвини, как источник по социально-экономической истории Восточного Закавказья".

[3] Հեթում պատմիչ, էջ 43։

«Ապա վասն սիրոյ քրիստոնէից եւս առաւել վասն իւր սեփհական երկրիս, գնաց բաղում գանձիւք առ Մանկու-գանն, եւ հոգաց յիթողուլ յերկիրս իւր զայսպիսի բարկութիւնս. եւ յորժամ հասաւ առ գանն կամօքն աստուծոյ մեծարեցաւ ի գանէն. եւ արարեալ գանն մեծ պատիւ եւ հարկիս թագաւորին հայոց եւ զամենայն բան նորա հոգաց ըստ կամաց նորա. եւ դարձոյց մեծ ուրախութեամբ յաշխարհն իւրա։[1]

Ուշադրության արժանի է նաև հետևյալ հանգամանքը. Մմբատը ներկայացել էր մոնղոլական Գույուկ-խանին որպես Տրլրկյան պետության պաշտոնական ներկայացուցիչ, հետևապես նա մոնղոլների կողմից չի դիտվում որպես Կիլիկիայի տերը, այստեղից բացասված չէ, իհարկե, այն հանգամանքը, որ Մաղաքիայի մոտ հիշատակված Մմբատի ստացած արտոնությունը, որի մասին խոսում է պրոֆ. Յակուբովսկին, վերաբերում էր իր անձնական-ժառանգական կալվածներին։ Սակայն այս դեպքում ինչպե՞ս հասկանալ «...Վասն ազատութեան երկրիս եւ վանորեիցս, եւ ամենայն քրիստոնէից...» միտքը։

Ելնելով վերոշարադրյալից, կարծում ենք, որ Մաղաքիա Արեղայի մոտ հիշատակված «Սղամիշ» բառը չի կարելի նույնացնել մոնղոլական «Սոուրգյալ» արտոնյալ հողատիրության հասկացողության հետ և ենթադրել, որ Մմբատ սպարապետի ստացած պարգևը այդ իմաստն է պարունակում, ինչպես կարծում են վերը նշված գիտնականները, դրանց թվում և Ֆ. Պատկանովը։

«... Արարեալ զնա սղամիշ, եւ տուեալ մեծ խաղախ...» Պետք է ենթադրել, որ այստեղ նշված «խաղախ»-ում՝ հրամարտակում մոնղոլական պետությունը խոստանում է իր հովանավորության տակ առնել և ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկյան պետությանը (իսկ մոնղոլական պետության այդ քայլը, Կիլիկյան թագավորության նկատմամբ բռնած բարյացակամ դիրքը, անհրաժեշտ էր տվյալ շրջանում, ելնելով իրենց պետության ռազմա-քաղաքական շահերից), արտաքին թշնամիների դեմ մղվող պատերազմների ժամանակ։

Հավանական ենք համարում այն ենթադրությունը, որ մոնղոլական «սոուրգյալ» բառը Մաղաքիայի մոտ հիշատակված «սղամիշ» բառն է, սակայն մեր կարծիքով, իմաստով նրանք տարբերվում են։ «Սղամիշը» գոր է ածված արտոնության իմաստով, սակայն չունի արտոնյալ հողատիրության իմաստ, այլ ունի բարյացակամության[2] իմաստ, որին արժանանում էին մոնղոլական պետության դաշնակից կամ վասալ երկրները։ Բացառված չէ նաև, որ այդ բարյացակամությունը, բացի գրավոր փաստաթղթից, արտահայտված լիներ նաև թանկարժեք պարգևներով, ավյալ դեպքում, ինչպես Ֆ. Պատկանովն է կարծում, պատվավոր հագուստ տալով։

Ինչ վերաբերում է Ստեփանոս Օրբելյանի մոտ՝ Մմբատ Օրբելյանի մասին եղած հիշատակությանը, ապա այստեղ պետք է ասել, որ պրոֆեսոր Յակուբովսկին կատարյալ շփոթության մեջ է ընկել։ Նախ Օրբելյանը պարզորեն նշում է այն արտոնության անունը, որ Մմբատը ստացել էր և

---

[1] Մաղաքիա Արեղա, «Պատմութիւն վասն ազգին Նեստորացւոց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 22—23։

[2] „Соургал„—առաբկա, որով արտահայտում է «բարյացակամություն»—Ֆ. Պատկանով, էջ 80։

այն ձեռք բերելու ճանապարհը։ Ինչպես գիտենք, հողատիրության արտոնյալ ինջու ձևը մոնղոլների մոտ հատուկ ինստիտուտ էր և այդ արտոնությունը ձեռք էր բերվում հովանավորության միջոցով և վերջապես, ինջուական արտոնյալ շրջանը հարկերից ընդհանրապես չէր ազատվում։ Ինջուական արտոնության էությունն այն էր, որ դիվանին տրվող հարկերը այս դեպքում մուծվում էին հովանավորող անձի անձնական գանձարանը, իսկ սուրգյալ արտոնությունը արքունական հարկերից ազատում էր գրեթե ամբողջությամբ։

Հետևապես Սմբատ Օրբելյանին տրված արտոնությունը չէր կարող պատկանել հողատիրության սուրգյալ արտոնյալ ձևին։

Մեզ թվում է, որ սուրգյալ արտոնյալ ինստիտուտը մոնղոլական շրջանում իկտային հասկացողության ավելի լայն իմաստ ուներ, իսկ հետո, հետմոնղոլական շրջանում նա ստանում է այն իմաստն ու բովանդակությունը, որի մասին սկզբում արդեն խոսել ենք։

Մոնղոլական էպոխայում հողատիրության արտոնյալ սուրգյալ ինստիտուտի գոյությունը Հայաստանում կարող է հատուկ ուսումնասիրության։